ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

ԵԴ2/1827/02/24 ք. Երևան
19 Մարտի 2024թ

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Թ. Ղուկասյանս (այսուհետ՝ Դատարան), ծանոթանալով «ՄՏԿ» ՓԲ ընկերության հայցադիմումին ընդդեմ «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կարիքների համար «G4 և G6 տեսակի բնական գազի կենցաղային հաշվիչների» ձեռքբերման նպատակով վերջինիս կողմից հայտարարված «№099/GArm/24_4.3_016/05.03.24» ծածկագրով մրցակցային ընտրության անցկացման ընթացքում նախնական ընտրության 1-ին փուլի հրավերն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑԻ

«ՄՏԿ» ՓԲ ընկերությունը 14.03.2024թ. էլեկտրոնային եղանակով հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կարիքների համար «G4 և G6 տեսակի բնական գազի կենցաղային հաշվիչների» ձեռքբերման նպատակով վերջինիս կողմից հայտարարված «№099/GArm/24_4.3_016/05.03.24» ծածկագրով մրցակցային ընտրության անցկացման ընթացքում նախնական ընտրության 1-ին փուլի հրավերն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումը դատավոր Թ. Ղուկասյանիս է մակագրվել 14.03.2024 թվականին:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի համաձայն՝ «1.

Դատարանը սույն գլխով սահմանված կարգով քննում և լուծում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերը:
2. Գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով»:
Տվյալ դեպքում ներկայացված հայցապահանջով հայցվորը վիճարկում է պատվիրատու պատասխանողի գործողությունները՝ ուղղված թիվ «№099/GArm/24_4.3_016/05.03.24» ծածկագրով գնման ընթացակարգով «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կարիքների համար «G4 և G6 տեսակի բնական գազի կենցաղային հաշվիչների» ձեռքբերման նպատակով վերջինիս կողմից հայտարարված մրցակցային ընտրության անցկացման ընթացքում նախնական ընտրության 1-ին փուլի հրավերին, ուստիև հայցը ենթակա է քննության ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2-րդ գլխի կանոններով:
Հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:
Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 120-122-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածներով, ինչպես նաև 27.2-րդ գլխի կանոններով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. «ՄՏԿ» ՓԲ ընկերության հայցադիմումն ընդդեմ «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կարիքների համար «G4 և G6 տեսակի բնական գազի կենցաղային հաշվիչների» ձեռքբերման նպատակով վերջինիս կողմից հայտարարված «№099/GArm/24_4.3_016/05.03.24» ծածկագրով մրցակցային ընտրության անցկացման ընթացքում նախնական ընտրության 1-ին փուլի հրավերն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ:

2. Գործի քննությունն իրականացնել գրավոր ընթացակարգով՝ դատական ակտի հրապարակման օր սահմանելով 30 ապրիլի 2024 թվականին՝ դատական իշխանության պաշտոնական էլեկտրոնային կայքի (datalex.am) միջոցով:

Որոշումը եռօրյա ժամկետում ուղարկել գործին մասնակցող անձանց:
Որոշումն անհապաղ ուղարկել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին՝ secretariat@minfin.am:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից:

Դատավոր՝ Digitally signed by GHUKASYAN TATUL 3907860608 Date: 2024.03.19 **Թաթուլ Ղուկասյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am